ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200: գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018Թ.
№ 24 (482)

# Սյունյաց Երկիր

*Ես մեռանիմ դառնամ ի հող,*
*գիրս մնա իիշատակող...*

*Անհայտ գրիչ*

www.syuniacyerkir.am



# «Սյունյաց երկիրը» 15 տարեկան է

Տասնհինգ տարի առաջ՝ 2003թ. հոկտեմբերի 1-ին, լույս աշխարհ եկավ «Սյունյաց երկիր» պարբերականի անդրանիկ համարը՝ իբրեւ մարզային թերթ հաջորդելով «Սյունյաց աշխարհին» եւ «Սյունիքին»:

Այն ժամանակ, նաեւ դրանից քիչ առաջ ու հետո, շատ թերթեր էին մեզանում հիմնվում, գործում առժամանակ, փակվում, մոռացվում...

Եվ այն օրերին ոչ ոք չէր կարող պատկերացնել, գուշակել, կանխատեսել, թե որքան ժամանակ է վիճակված նորաստեղծ այդ լրատվամիջոցին, որին տրվեց խորենացիական փառահեղ անուն՝ «Սյունյաց երկիր»:

Ոչ ոք չէր կարող ենթադրել նաեւ, թե ինչ փորձություններ են սպասվում անցնելիք ճանապարհին...

Ու հիմա տասնհինգ տարեկան ենք:

Ծրագրել էինք լուսավոր այդ առիթով հատուկ համար հրատարակել, ինչպես արել էինք տասնամյակի կապակցությամբ, նույնիսկ միջոցներ էինք ձեռք բերել մեր բարեկամների աջակցությամբ, որոշ աշխատանքներ էինք հասցրել անել, բայց...

Ինչ-ինչ հանգամանքների թելադրությամբ հոբելյանական համարի թողարկումը հետաձգվեց:

Այդուհանդերձ՝ Սյունիքի համար (եւ ոչ միայն խմբագրակազմի ու ընթերցողի) նշանավոր այդ առիթով, ինչպիսին մարզային պարբերականի տասնհինգ ամյակն է, չենք կարող խոսք չասել:

***

Հիշարժան այս օրը, նախեւառաջ, մեր անկեղծ հարգանքն ենք ընծայում այն մարդկանց, ում մտքի, ջանքի շնորհիվ, ում աջակցությամբ (նյութական, բարոյական) «Սյունյաց երկիրը» տասնհինգ տարի շարունակ, մեկ օր անգամ չդադարեցնելով իր գործունեությունը, եղավ մեր լեռնաշխարհի կենդանի ղողանջը, մեր երկրամասի հասարակական-քաղաքական, հոգեւոր-մշակութային կյանքի կենդանի թրթիռը, ոչ սովորական մեր ժամանակների սյունիքյան բաբախյունը:

էջ 3

# Սյունիքում դադարեցվել է ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի գործողությունը

Սիրո եւ համերաշխության Հայաստանի ամենառազմավարական մարզում՝ Սյունիքում, օրեցօր նոր մասշտաբներ է ընդունում խոսքի ազատությանը հայտարարված պատերազմը:

Վահե Հակոբյան անաղուհացին Սյունիքից վտարելուց հետո խոսքի ազատության, բազմակարծության դեմ պայքարի դրոշը վերցրել են Քաջարանում բնավորված եւ երկրամասի ընդերքի հարստությամբ չափը կորցրած ավազակախմբի անդամներն ու գաղութարարները:

Նրանց համոզմամբ՝ Սյունիքը վերջնականապես ծնկի բերելու եւ գաղութացնելու ճանապարհին միակ խոչընդոտը շարունակում է մնալ «Սյունյաց երկիրը»:

Հայաստանի թիվ 1 հարկատու, աշխարհի մոլիբդենի հաշվարկված պաշարների 8 տոկոսի տիրակալ, հանրապետության մետաղական հանքարդյունաբերության 80 տոկոսի կրող Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ղեկավարները միայն վերջին երկու-երեք ամսում ութ քաղաքացիական հայց են ներկայացրել ընդդեմ «Սյունյաց երկրի» ու նրա խմբագրի:

Ուշագրավ է, որ ահաբեկված գաղութարարները հայցադիմումներն ուղղել են ոչ թե Սյունիքի, այլ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան (Սյունիքից նրանք սարսափում են):

էջ 4



# 100 օր առաջ Սյունիքում արձանագրվեց ազգային-ազատագրական պայքարի առաջին հաղթանակը

2018թ. հունիսի 8-ին Հայաստանի կառավարությունը, ընդառաջ գնալով սյունեցիների ազնիվ ձգտումներին, պաշտոնից հեռացրեց Սյունիքի տխրահռչակ մարզպետ Վահե Ա. Հակոբյանին:

Վահեն Հայաստանի միակ մարզպետն էր, որ ճակատը դեմ արած՝ մինչեւ վերջ խուսափեց հրաժարականի դիմում ներկայացնել, բայց կառավարությունը զրո նշանակություն տվեց այդ հանգամանքին եւ թախտընկեց արեց նրան:

Նա բանակցությունների մեջ էր մտել նոր իշխանության ներկայացուցիչների հետ՝ պաշտոնն ամեն գնով պահելու համար, սակայն որեւէ արդյունքի չհասավ:

Եւ չնայած դրան, պաշտոնից հեռացվելուց մինչեւ օրս ինքն ու իր սպասավորները գրեթե ամեն օր հրապարակավ ակնարկներ են անում, թե շուտով Վահեն նոր պաշտոն է ստանալու. մի օր ասում են՝ ոստիկանությունում, հաջորդ օրը՝ ԱԱԾ-ում, երրորդ օրը՝ ֆուտբոլի ֆեդերացիայում, չորրորդ օրը՝ վերադառնալու է Սյունիքի մարզպետարան...

ՀՀԿ-ից փախչելիս էլ արդարանում էր, թե այնպիսի պաշտոնի է անցնում, որ անհամատեղելի է կուսակցականության հետ: Մինչդեռ շարունակում է մնալ չպահանջված ու հանրապետության ամենաերիտասարդ թոշակառուի կարգավիճակում:

Ինչեւէ, 2018թ. հունիսի 8-ը Սյունիքի նորագույն պատմության մեջ մտավ իբր վերջին երկու տարում մեր լեռնաշխարհում ծավալված ազգային-ազատագրական պայքարի կարեւորագույն հանգրվան, որը հիշվելու է գալիք սերունդների կողմից:

Սակայն չարափառ մարզպետին Սյունիքից քշելով՝ տարածաշրջանի առջեւ ծառացած բազում խնդիրներ ու խոչընդոտներ, նաեւ նրա դրդմամբ ու Քաջարանի քսակի զորությամբ ստեղծված, շարունակում են պահպանվել ու չհաղթահարվել:

Նախ՝ գաղութարարների մի խումբ (անհայտ ծագումով) շարունակում է տեր լինել մեր երկրամասի ընդերքին, ուստի եւ նրանց դեմ պայքարը, ուզենք-չուզենք, նոր թափ պիտի ստանա:

Սյունիքում եւ մասնավորապես Քաջարանում ոչ մի գաղութարար, ոչ մի հրոսակ չպիտի մնա. սա է յուրաքանչյուր արժանապատիվ սյունեցու թիվ 1 խնդիրը:

Մինչդեռ Հայաստանի նոր կառավարությունը, որ բոլորիս սիրո եւ վստահության զավակն է, այդպես էլ չի պատասխանում դրանից բխող գլխավոր հարցին՝ Քաջարանի կոմբինատը պետությո՞ւն է պետության ներսում, թե՞ սովորական տնտեսվարող սուբյեկտ հանրապետությունում:

Հայաստանի նոր կառավարությունը շարունակում է չպատասխանել հարցին՝ ովքե՞ր էին Քաջարանի կոմբինատի

էջ 4

# Կապանի համայնքապետի ընտրությունը՝ հոկտեմբերի 21-ին



***Գեւորգ Փարսյան***



***Էդգար Հովհաննիսյան***




***Արմեն Ղազարյան***



***Նարեկ Բաբայան***

Սեպտեմբերի 30-ին ավարտվեց Կապանի համայնքապետի թեկնածուների առաջադրման ժամկետը:

Կապան համայնքի ղեկավարի թեկնածու են առաջադրվել Գեւորգ Փարսյանը (ինքնաառաջադրում, «Ռազ-Բիլդինգ» ՍՊԸ գլխավոր տնօրեն), Էդգար Հովհաննիսյանը (ինքնաառաջադրում, «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ իրավաբանական բաժնի պետ), Արմեն Ղազարյանը (ինքնաառաջադրում, **«Արկ»** բնապահպանական ՀԿ-ի ծրագրի ղեկավար) եւ Նարեկ Բաբայանը (ինքնաառաջադրում, Սյունիքի մարզպետի տեղակալ):

Ինչպես տեղեկացնում է թիվ 35 տարածքային ընտրական հանձնաժողովի քարտուղար Ռամելա Հակոբյանը, թեկնածուները կգրանցվեն մինչեւ հոկտեմբերի 2-ը (ներառյալ) ընկած ժամանակամիջոցում, իսկ քարոզարշավը կմեկնարկի հոկտեմբերի 9-ին:

Ըստ Ռամելա Հակոբյանի՝ թեկնածուների փաստաթղթերի հետ կապված որեւէ խնդիր չկա, եւ գրանցումը կկատարվի սահմանված ժամկետում:

Թեկնածուներից միայն Նարեկ Բաբայանն է կուսակցական՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է:

Համայնքի ընտրողների նախնական թիվը 35058 է (ընտրողների նախնական ցուցակը տեղամասային կենտրոնների տարածքը տիրապետողներին կտրամադրվի մինչեւ հոկտեմբերի 4-ը, իսկ վերջնական ցուցակը՝ քվեարկությունից երեք օր առաջ):

Կապանի համայնքապետի ընտրության համար համայնքի տարածքում ձեւավորվել է 52 ընտրական տեղամաս, որից 21-ը՝ Կապան քաղաքում:

Ընտրությունը տեղի կունենա հոկտեմբերի 21-ին:

**Լուսանկարների հերթականությունը՝ ըստ ընտրական հանձնաժողովի ներկայացրած ցուցակի:**

**«Սյունյաց երկիր»**
**30 սեպտեմբերի 2018թ.**

# Կապանի զորամասում տոնական օր էր







Սեպտեմբերի 8-ին նշվեց Կապանի N զորամասի կազմավորման 17-րդ տարեդարձը:

Առավոտից զորամասի տարածքում կազմակերպված ուսումնական կետերում ցուցադրված էին զենք, զինամթերք, զրահատեխնիկա, եւ հյուրերը, զորամասի հրամանատարության հետ շրջելով, ծանոթացավ դրանց: Զորամասը բաց էր բնակչության համար, եւ այստեղ էին աշակերտներ, ուսանողներ, քաղաքացիներ, ովքեր նույնպես շրջում ու ծանոթանում էին ուսումնական կետերում ներկայացվածին: Հյուր էին եկել նաեւ Արցախյան ազատամարտի վետերաններ, որոնցից շատերը կանգնած են եղել զորամասի կազմավորման ակունքներում:

Այնուհետեւ տեղի ունեցավ տոնական միտինգ, որի ընթացքում ներկայացվեցին զորամասի պատմությունը, նրա հիմքում եղած զորամիավորումների ռազմական ուղին: Ներկաներին շնորհավորանքի խոսք ուղղեց Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանը:

-Մեր հայրենիքում զինվորական յուրաքանչյուր ստորաբաժանման ստեղծման ու կայացման թիկունքում հայոց ազատամարտի տարիներն են՝ կամավորական շարժումից մինչեւ մասնագիտացված ռազմական կառույցներ ստեղծելու ճանապարհը, հայ զինվորի կերտած հաղթանակները: Ուստի, ամեն նման տոնակատարություն եւ ծնունդ մեզ բերում է ազատ, ինքնիշխան պետության զավակը լինելու հպարտությունը եւ վստահությունը, որ Հայաստան աշխարհի խաղաղության պահպանությունն ամուր ձեռքերում է, մեր սահմանները՝ անառիկ», - մասնավորապես նշեց Կարեն Համբարձումյանը՝ տոնական օրվա առիթով զինվորականներին մաղթելով անվտանգ ծառայություն, ամուր ռազմական ոգի, անամպ երկինք:

Շնորհավորանքներ եւ բարեմաղթանքներ հնչեցին նաեւ ՊՆ առաջին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Ժ.Պողոսյանից, զորամասի հրամանատար, գնդապետ Ա.Պողոսյանից, Կապանի ԵԿՄ-ից, ժամանակին այստեղ ծառայած՝ Կապանի պետթատրոնի գեղարվեստական ղեկավար Ա.Գաբրիելյանից, սերժանտական խորհրդի նախագահից, Սյունիքի տարածաշրջանային քոլեջի ուսանողից:

Օրվա կապակցությամբ մի խումբ ազատամարտիկներ ու զինվորականներ պատվոգրեր ստացան, իսկ կարգապահությամբ աչքի ընկած զինծառայողներից մի քանիսը՝ շատ սպասված արձակուրդ…

Զորամասը «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր է:

**«Սյունյաց երկիր»**

# Կսկսվեն Հյուսիս-հարավ ավտոմայրուղու Սիսիան-Քաջարան հատվածի կառուցման աշխատանքները

**«Նախատեսում ենք Հյուսիս-հարավ ավտոմայրուղու ամենադժվար հատվածում աշխատանքներն առաջ տանել, որն ավելի էական է»**,- լրագրողների հետ ճեպազրույցին ասել է ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Աշոտ Հակոբյանը:

Ըստ նրա՝ ճանապարհի կառուցումը կսկսեն Սիսիան-Քաջարան հատվածից, եւ նախագիծը կմասնատեն:

**«Այսինքն՝ հակառակ նախկին դիրքորոշման, որ անենք այն հատվածը, որ կար եւ այդքան անհրաժեշտ չէր, հիմա ուզում ենք խիստ անհրաժեշտ հատվածն անել»**,-ասաց նա:

Ըստ նախարարի՝ իրենք էլ մասնակի համաձայն են այն մեղադրանքներին, որոնք ուղղված էին նախկիններին, թե ինչու են ճանապարհի կառուցում սկսել Արտաշատ-Աշտարակ հատվածից: **«Այն, ինչի համար մեղադրել են, մասնակի մենք էլ ենք համաձայն, թե ինչու հենց այս հատվածից առաջինը որոշեցին Տրանշ 1-ը սկսել՝ Արտաշատ-Աշտարակ հատվածից, իհարկե դա էլ իր արդացումներն է ունեցել»**,- ասաց նա:

Թե չարաշահումներն ինչքանով են վերաբերում նախարարությանը, Աշոտ Հակոբյանը նշեց, որ որեւէ այլ տվյալ չունի, միայն տեղյակ է, որ 24 մլրդ-ի խախտման մասին է խոսքը:

Հարցին, թե ի վերջո կտեսնե՞նք այդ ճանապարհը, նախարարը նշեց՝ **«Կարծում եմ, այո»**: Նա հաստատեց, որ արված ճանապարհը հիմա վերանորոգում են, ճաքեր են փակում: **«Ճանապարհը դեռեւս մեր կողմից չի ընդունվել, իրենք պարտավոր են թերությունները վերացնել, մենք էլ փորձաժամկետ ունենք, կտեսնենք, իրականում թերությունները վերանո՞ւմ են, թե՞ ոչ, նոր կընդունենք այդ ճանապարհը»**,-ասաց նա:

**politik.am**

# «Սյունյաց երկիրը» 15 տարեկան է

էջ 1 Հարգանք եւ երախտագիտություն բոլոր նրանց, ովքեր իբրեւ ընթերցող, իբրեւ գաղափարակից, գրչակից կամ համախոհ՝ աջակից եղան մեզ՝ պարտադրված փորձությունները արժանապատվորեն հաղթահարելու ճանապարհին:

Եվ, իհարկե, փա՜ռք Տիրոջը, որ մեր խմբագրակազմին բաշխեց այնքան եռանդ, ստեղծագործական կարողություններ ու վճռականություն, նաեւ հետեւողականություն, որ կարողացանք իրականացնել մեր առաքելությունը:

***

Համարձակվում ենք արձանագրել՝ պարբերականի տասնհինգամյա ուղին հայրենասիրության, հայրենի բնօրրանին նվիրվելու ոգեշունչ օրինակ է:

Մեր թերթը սյունեցիներիս հիշողությունն է անցած տասնհինգ տարվա մասին, որ ապրելու է նաեւ մեզանից հետո:

Անցած տարիներին մեր երկրամասի հանդեպ ունեցանք սրբազան անհանգստություն, պատվախնդրություն, զգայուն վերաբերմունք՝ մեր ազգային ցավերի եւ հատկապես սյունիքյան հոգսերի հանդեպ:

Շատերը հենց «Սյունյաց երկրի» շուրթերով էին ուզում լսել իրենց մտածումները, եւ լսում էին:

Շատերը հենց «Սյունյաց երկրի» աջակցությունն էին ակնկալում, երբ հայտնվում էին ինչ-որ դժվարության մեջ, երբ դառնում էին կամայականության ու անարդարության թիրախ: Եվ աջակցությունն ու զորակցությունը չէին ուշանում:

«Սյունյաց երկիրն» այնպիսի ներկայություն էր, որ իր հնարավորությունների սահմաններում փորձում էր կանգնեցնել հոգեւոր ամլության գրոհը մեր երկրամասում՝ ընթերցողին պարբերաբար ներկայացնելով հատուկ եւ թեմատիկ համարներ, որոնք, շատ փորձագետների ու մասնագետների պնդմամբ, բացառիկ էին եւ ունեցան հանրագիտարանային, սկզբնաղբյուրային նշանակություն:

«Սյունյաց երկիրը» արթուն պահեց մեր երկրամասը հայոց ազգային վերջին զարթոնքից դեռ շատ առաջ: Այլ հարց է, թե ամենավերեւում ինչո՞ւ էին կույր եւ խուլ ձեւանում երկրամասի հոգսերի ու հիմնախնդիրների հանդեպ:

Նաեւ այդ ամենի շնորհիվ կենդանի ու կենսունակ մնաց անընկճելի այն փաղանգը, որ տեր կանգնեց Սյունիքի արժանապատվության ամենաշփոթ ու խառնակ պահերին անգամ:

Երբեք այն կարծիքին չենք եղել, որ բոլորը պետք է պայքարեն եւ ընդդիմադիր վարք դրսեւորեն:

Մենք պարզապես համաձայն չենք եղել ու չենք նրանց հետ, ովքեր այդպես էլ չեն գիտակցել, որ Բանը եւ Աստված հոմանիշ են, որ խոսքի ազատության ժխտումը, լրատվամիջոցի դեմ պայքարը բոլորիս պարտությունն է:

Եվ երիցս փա՜ռք Տվողին հանճար, որ ազատ խոսքը, թեեւ Սյունիքում ենթարկվեց աներեւակայելի փորձությունների եւ ինկվիզիցիայի ժամանակներին բնորոշ հետապնդումների, ոչ միայն չպարտվեց, այլեւ քայլ անգամ չնահանջեց:

Ապացույցներից մեկը «Սյունյաց երկրի» չհոգնած, անտրտունջ, վաղվա օրվա հանդեպ հավատով լցված ներկայությունն է:

Իսկ թերթի խմբագրակազմը... Հրաշալի մարդկանց այդ բույլը երբեք չի մտածել, որ թերթն իրենն է: Հակառակն ենք մտածել՝ մենք ենք թերթինը, ու այդպես էլ գործել եւ գործում ենք՝ լրագրողական արհեստի նախանձախնդրությամբ, հայրենի եզերքի բոլոր ելեւէջների հանդեպ տիրոջ ու մշակի պատվախնդրությամբ եւ հետաքրքրությամբ:

Այդ մոտեցման շնորհիվ է, որ կարողացել ենք հարաբերվել խստապահանջ ընթերցողի հետ, ընթերցողն էլ՝ մեզ հետ, երբ նույնիսկ մարդկանց աշխատանքից հեռացնում էին







միայն այն «մեղքի» համար, որ «Սյունյաց երկիր» է բաժանորդագրվում, որ ընթերցում է այդ թերթը, որ հոդվածներ է հեղինակում նրա էջերում:

Ու մեր բարեկամների շարքը երբեք չնոսրացավ, մեր իսկական բարեկամներից ոչ մեկը չհեռացավ:

Ովքեր էլ գնացին, դրանից միայն շահեցինք, մաքրվեցինք, պարզաջրվեցինք...

***

Թող զարմանալի չթվա, բայց այսօր հիշում ենք նաեւ մեր ընդդիմախոսներին, մեր «հավատաքննիչներին», ովքեր տասնհինգ տարվա ընթացքում ոչինչ չխնայեցին՝ կանգնեցնելու մեր երթը...

Իրոք որ, անհաշիվ են թերթի դեմ ձեռնարկված քայլերը... Այդ ամենը, սակայն, պարտությունների բեռ չդրեց մեր ուսերին, բայց ավելորդ լարվածությունից, ինքնապաշտպանվելուն միտված գործողություններից խուսափել չկարողացանք:

Ու եթե առօրյա կյանքում նրանց մերժում ենք կամ մոռացության տալիս, ապա միայն այն բանի համար, որ սեփական դեմքով ու գույնով հանդես չեն գալիս, որ երեւում են կեղծ էջերով, կեղծ ստորագրությամբ կամ անանուն նյութերով...

Կա՞ մեկը (մարդ կամ ատյան) մոլորակում, որ նման «նյութերին» ու նման «հեղինակներին» լուրջ է վերաբերվում:

Թե չէ կբանավիճեինք լրագրային հրապարակումներով, եթերային չկաղապարված հաղորդումներով, ու բոլորս կշահեինք, մարզը կշահեր: Եվ այդ ժամանակ՝ մեր միասնությամբ հզոր կլինեինք, կլրացնեինք միմյանց, կզգայինք իրարու կարիք: Բայց հիմա դռներ ենք փակել միմյանց առաջ... Եվ այդքանից հետո հանդգնում են «հավատաքննիչի» դեր ստանձնել, համարձակվում են լուրջ մարդու պատրանք ստեղծել: Չի լինի...

Սյունիքն է երկնել «Սյունյաց երկիրը», եւ մենք իրենն ենք, մեր իսկական հավատաքննիչն էլ բարեմիտ ընթերցողն է, հայոց մեծերն են՝ իրենց սահմանած բարոյական, գեղագիտական, մարդկային, քաղաքացիական, լեզվական չափորոշիչներով:

Եվ, այդքանով հանդերձ, բաց ենք երկխոսելու համար, եթե դա միտված պիտի լինի Սյունիքի միասնության վերականգնմանը, երկրամասի առջեւ ծառացած խնդիրների լուծմանը:

***

Հաճախ են փորձել մեզ կպցնել ընդդիմադիրի պիտակ:

Մինչդեռ ընդդիմադիր ու ապստամբ չենք եղել երբեք, ո՞ւմ դեմ ելնեինք, չէ՞ որ տունը մերն է, հայոց պետությունը՝ եւս, մեր ծուռն ու շիտակն էլ մերն են:

Ընդամենը սեփական դեմք եւ տեսակետ ենք ունեցել մեր ընթացքի վերաբերյալ, ինչպես որ այսօր:

Եվ հաշտ ենք գրեթե բոլորի հետ:

Հաշտ ենք եւ անգամ գործընկեր բոլոր նրանց հետ, ովքեր տարբեր վայրերից են եկել մեր լեռնաշխարհ եւ իրենց գործունեությամբ նպաստում են երկրամասի առջեւ ծառացած խնդիրների լուծմանը, Սյունիքում պետական կարգի ամրապնդմանը:

Մենք անհաշտ ենք միայն (եւ լինելու ենք այդպիսին) մեր երկրամաս ներխուժած հրոսակների, նաեւ նրանց տեղացի եւ ոչ տեղացի ստրուկների հետ:

***

Մեր աչքի առաջ ամեն օր թոթափվում են փառքերը, տապալվում կուռքերը եւ ծնվում նորերը, «աստվածներն են» նորանում ամեն օր, ազգն է նորանում ամեն ժամ, բայց Սյունիքը, որքան էլ ցավալի է, մնացել է նախահեղափոխական լաբիրինթոսում:

Մեր ոտքերից շարունակվում է կախված մնալ անցյալի բեռը:

Հողեղեններիս դեռ չի լքել հանդուրժման եւ սիրո ծարավը:

Դեռ չեն քանդվել Սյունիքում վերջին տարիներին կառուցված բարիկադները...

Հայաստանում հռչակված (չենք ասում՝ իրականացված) գաղափարներին համաքայլ գնալու խնդիր ունենք այսօր, իսկ դրա «ճանապարհային քարտեզը» ցուցանվել է քանիցս...

Անշուշտ, «Սյունյաց երկիրն» էլ հեռու է անթերիից:

Բայց եւ հավատում ենք, որ զորանալու ենք դեռ ու գեղեցիկ գործեր ենք դնելու մեր հոգեւոր հացի սեղանին:

***

Այսօր էլ, իհարկե, դժվար է ենթադրել, թե որքան ճանապարհ ունի անցնելու «Սյունյաց երկիրը», ինչպես հնարավոր չէր ասել տասնհինգ տարի առաջ:

Իսկ երբ մի օր ավարտենք մեր առաքելությունը, վստահ ենք, մեր գործը Սյունիքում շարունակելու են ավելի հզոր լրատվամիջոցներ, ավելի համարձակ ու բանիմաց լրագրողներ:

Բայց դա երբեք խամրության մշուշով չի ծածկելու «Սյունյաց երկրի» արած-դրածը:

Այն, ինչ գրել ու գրում ենք թերթի էջերում, մնալու եւ պահվելու է մեր ազգային պահոցներում:

Եվ ապագայի պատմաբանը, որ կհետազոտի Սյունիքի նորագույն շրջանի տարեգրությունը, պարտադրված կլինի իբրեւ սկզբնաղբյուր թերթելու «Սյունյաց երկրի» էջերը, նաեւ նրա հրապարակումներով պատկերացում կազմելու մեր օրերի մասին:

Միջնադարյան իմաստունն է ասել՝ **«Ես մեռանիմ դառնամ ի հող, գիրս մնա հիշատակող»:**

Այդ խոսքն ասվել է նաեւ «Սյունյաց երկրի» համար:

Ու ասվածին ավելացվելու է երբեւէ՝ **«Եվ 21-րդ դարասկզբին Սիսական աշխարհում կար մի կանթեղ՝ «Սյունյաց երկիր» անուն, նա ոչ միայն լույսի աղբյուր եղավ ու իր օրերի ճշմարիտ վավերագրողը, այլ լեռնաշխարհի արժանապատվության արթուն պահապանը»:**

Մինչ այդ, սակայն, «Սյունյաց երկիրը» դեռ կոչում եւ առաքելություն ունի, որ պիտի կատարի:

Դեռ ասելիք ու անելիք ունի՝ թերթի տպագիր տարբերակով ու syuniacyerkir.am կայքով:

Եվ մենք այդ ճանապարհին ենք...

**Սամվել Ալեքսանյան**

# «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցությունը շնորհավորում է «Սյունյաց երկիր» թերթին



Անձամբ իմ եւ «Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցության նախագահության անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ եւ Ձեր աշխատակազմին՝ անպարտելի Սյունյաց աշխարհի սուրբ հողում ծնունդ առած, պատվախնդիր սյունեցիների ամենօրյա հոգսերով ապրող, սյունիքաշինությամբ տարված, սյունեցիների համար պաշտոնաթերթ դարձած «Սյունյաց երկրին»՝ ծննդյան 15-րդ տարեդարձի առթիվ:

Իսկապես, «Սյունյաց երկիր»-ը ոչ թե 15 տարեկան է, այլ 150, 1500..., որովհետեւ միակն է, որ միշտ գնահատել եւ վեր է հանել ու նորօրյա սերնդին մատուցել ինչպես Սյունյաց անարատ հողում արարած Սուրբ Գրիգոր Տաթեւացու, հայ արձակի նահապետ Ակսել Բակունցի, աշխարհահռչակ պատմաբան եւ բանասեր Նիկողայոս Ադոնցի, մեծ քնարերգու Համո Սահյանի, Ամենայն հայոց գուսան Աշոտի, մեծ սյունեցի Սերո Խանզադյանի անունները, այնպես էլ Սյունիքի ողջ տարածաշրջանի խնդիրները, ձեռքբերումներն ու բացթողումները:

Բնականաբար, անգնահատելի է «Սյունյաց երկիր» թերթի հայր ծնողը դարձած, հայածին Սամվել Սյունեցի-Ալեքսանյանի կեսդարյա հայրենակերտ եւ սյունիքանպաստ գործունեությունը:

Սամվե՛լ Սյունեցի, Դո՛ւք եք անաչառության, միայն եւ միայն ճշմարտության քարոզչության ու ճշմարտությունը խիզախորեն ներկայացնող, արդարության եւ ճշմարտության անձնագիր ունեցող լավագույն առաջամարտիկներից մեկը:

Կրկին շնորհավորելով Ձեր զավակի՝«Սյունյաց երկիր» թերթի 15-րդ տարեդարձը, մաղթում եմ Ձեզ հայոց լեռներում ճախրող արծիվների անկոտրում ոգի:

Աստված պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանիքը:

Աստված պահպանի Հայաստանը, Արցախը, Սփյուռքը եւ հայոց սուրբ հողը:

**Հարգանքով՝
«Հայոց արծիվներ. միասնական Հայաստան»
կուսակցության նախագահ Խաչիկ Մաjիսի Ասրյան**

# 100 օր առաջ Սյունիքում արձանագրվեց ազգային-ազատագրական պայքարի առաջին հաղթանակը

էջ 1

սեփականատերերը 2004-ի դեկտեմբերի 9-ին՝ մասնավորեցման ժամանակ, եւ ովքե՞ր են հիմա ու ի՞նչ ճանապարհով է տեղի ունեցել սեփականության վերաբաշխում (բռնազավթե՞լ են, վաճառե՞լ են, նվիրե՞լ են):

Չմոռանանք, որ Քաջարանի կոմբինատը տիրապետում է աշխարհում հաշվարկված մոլիբդենի պաշարների 8 տոկոսին եւ Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության մոտ 80 տոկոսին:

Հայաստանի նոր կառավարությունը դեռեւս չի պատասխանել հարցերին, թե իրականում որքա՞ն հանքաքար է տարեկան արդյունահանվում Քաջարանում, թե որքա՞ն է Արծվանիկի պոչամբարի ծավալը, թե ինչո՞ւ են այդքան հողեր (մինչեւ այսօր) հատկացնում այդ ընկերությանը, թե ինչպե՞ս է «Լեռէքսը» երկու- երեք պահակով եւ ոչ մի կգ հանքաքար չարդյունահանելով տարիներ շարունակ տեղ զբաղեցրել Հայաստանի խոշոր հարկատուների ցուցակում, թե ինչպե՞ս է առանց մեկ լումա ներդրման Քաջարանում ծնվել «Արմենիան մայնինգ քոնթրաքթոր» հանքարդյունաբերական ընկերությունը, եւ ովքե՞ր են նրա բաժնետերերը:

Հայաստանի նոր կառավարությունը դեռեւս չի պատասխանել հարցերին, թե ինչո՞ւ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» եւ Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամներն օրենքով սահմանված կարգով չեն հրապարակել բոլոր տարիների իրենց հաշվետվությունը, թե ի՞նչ ճակատագիր ունեցավ Սյունիքի զարգացման եւ ներդրումների հիմնադրամից մյուս հիմնադրամին (մասնավոր) տրված 300 մլն դրամը:

Դեռեւս պետական մակարդակով պատասխան չի տրվել հարցին (հազար անգամ բարձրացված





ու արծարծված)՝ Վահե Հակոբյանը Սյունիքի մարզում պաշտոնյաների խոսակցությունների գաղտնալսումներ արե՞լ է, թե՞ ոչ:

Դեռեւս պատասխան չի տրվել պարզագույն հարցին, թե որտե՞ղ է գտնվում եւ ինչո՞վ է զբաղված «Քրոնիմետ մետալ թրայդինգ Սի Այ Էս» ՓԲ ընկերությունը, ի՞նչ նպատակով են օգտագործվել Զանգեզուրի պղնձամոլիբդենայինից պարբերաբար տրվող միջոցները:

Ոչ ոք դեռեւս չի պատասխանել հարցին, թե տնտեսվարող որ սուբյեկտներն են իրականացնում խտանյութի փոխադրումը Քաջարանից, եւ ինչու տեղացի մեքենատերերը դուրս են մղվել բեռնափոխադրումների ոլորտից:

Առայժմ ոչ ոք քայլեր չի անում վերականգնելու այն մարդկանց իրավունքները, որ խախտվել ու ոտնահարվել են Վահեի կամայականությունների շնորհիվ:

Որեւէ քայլ չի արվում վերջին տարիներին Սյունիքից գողացածը պետական գանձարան վերադարձնելու ուղղությամբ:

Մինչեւ հիմա պատասխանատվության չեն կանչվել այն մարդիկ, ովքեր 2018-ի ապրիլին հրապարակավ բռնություններ են գործադրել կապանցի ցուցարարների դեմ, ինչի մասին վկայող տեսանյութերը մինչեւ հիմա շրջանառվում են համացանցում:

Ոչ ոք չի ուզում պարզաբանել, թե ինչո՞ւ վարչապետի սյունիքյան այցից հետո կոմբինատի կողմից պետությանը տրվող բոլոր տեսակի հարկերի ընդհանուր գումարը մեկ եռամսյակում միանգամից ավելացավ 20 մլրդ դրամով: Բա եթե հնարավոր է այդքան հարկ տալ, ինչո՞ւ տարիներ շարունակ չէիք տալիս:

Ոչ ոք, ի վերջո, չի փորձում քաղաքական ու իրավական գնահատական տալ այն ամենին, ինչ կատարվել է Սյունիքում 2016-2018 թվականներին:

Եւ ոչ միայն այդ հարցերին պատասխան չի տրվում, այլեւ նոր ու կանաչ լույս է վառվում գաղութարարների առջեւ:

Պատահական չէ, որ նրանց կողմից նոր ու աննախադեպ արշավ է սկսվել Սյունիքում՝ ընդդեմ ազատ խոսքի:

Միայն մեկ օրինակ. Երեւանի ընդհանուր իրավասության դատարանն անկախ Հայաստանի պատմության մեջ աննախադեպ մի որոշում է կայացրել՝ ավազակախմբի անդամներից մեկի մասով դադարեցնել ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի եւ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասի կիրարկումը՝ արգելելով «Սյունյաց երկրին» եւ նրա խմբագրին՝ որեւէ նյութ հրապարակել Քաջարանում ծվարած հանրահայտ ասպատակի մասին:

**Սյունիքում ստեղծված վիճակը թույլ է տալիս վերստին բարձրաձայնել վաղուց արձանագրված եզրակացության մասին՝ հայաստանյան թավշյա հեղափոխության ազնվության, մաքրության, բարոյականության բարոմետրը եղել եւ մնում է Քաջարանի հանքարդյունաբերության հանդեպ պետական վերաբերմունքի կերպը:**

**Քանի դեռ Քաջարանի հանքարդյունաբերությանն առնչվող բոլոր հարցերը (որոնցից յուրաքանչյուրն ունի համապետական նշանակություն) պետական մակարդակով պատասխան չեն ստացել, հեղափոխության հաղթանակի մասին խոսելն անլուրջ է:**

**«Սյունյաց երկիր»**

# Սյունիքում դադարեցվել է ՀՀ սահմանադրության 42-րդ հոդվածի գործողությունը

էջ 1

Եւ մայրաքաղաքային այդ դատարանը, չարաշահելով իր հայեցողական իրավունքը, հաշվի չառնելով բազմաթիվ ու էական հանգամանքներ, հայցադիմումները վարույթ է ընդունել՝ անտեսելով ակնհայտը, որ դրանք ենթակա են Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի քննության:

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը դրանով բացառել է մրցակցային դատավարության հնարավորությունը եւ ի սկզբանե անհավասար պայմաններ ստեղծել Հայաստանի թիվ 1 հարկատուի ու մարզային սովորական մի թերթի միջեւ սպասվող դատավարություններում:

Բայց դա չէ կարեւորն ու արտառոցը, այլ…

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդիկ Ավետիսյանը, ավազակախմբի անդամներից մեկի հայցադիմումի առիթով, իբրեւ հայցի ապահովման միջոց, դիմել է անկախ Հայաստանի պատմության մեջ նախադեպը չունեցող քայլի (գործ N ԵԴ/12118/02/18, 4 հուլիսի 2018թ.):

Դատարանի որոշմամբ արգելվել է «Սյունյաց երկրին» ու նրա խմբագրին՝ որեւէ նյութ հրապարակել Քաջարանում ծվարած եւ ավազակային հատուկ առաքելությամբ Սյունիք գործուղված մի անձնավորության վերաբերյալ, որի կենսագրությունը չորս տարի շարունակ գաղտնի է պահվում սյունեցիներից:

Փաստորեն ընդունվել է դատական ակտ, որով դադարեցվել է Հայաստանի Հանրապետության սահմանադրության 42-րդ հոդվածի եւ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի գործողությունը Սյունիքում:

Հիշեցնենք՝ տվյալ փաստաթղթերի նշված հոդվածներով հռչակված է մարդկանց՝ կարծիք արտահայտելու իրավունքը, որը մաս է կազմում մարդու եւ քաղաքացու հիմնարար իրավունքների ու ազատությունների համամարդկային սկզբունքների:

Հիշեցնենք նաեւ՝ ո՛չ ՀՀ վճռաբեկ դատարանը, ո՛չ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նման նախադեպ չունեն:

Առաջին նախադեպը, փաստորեն, ստեղծվում է Սյունիքում,



այն էլ՝ «Սյունյաց երկիր» թերթի ու նրա խմբագրի առումով, այն էլ՝ Սյունիք ներխուժած գաղութարարների միջնորդությամբ:

Իսկ եթե կա նման նախադեպ ու մենք տեղյակ չենք, ապա Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը պարտավոր էր գոնե թեթեւակի հղում կատարել նախադեպային իրավունքի այդ նորմին:

Բանն այն է, որ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի տվյալ արտառոց քայլը նախադեպ կդառնա Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում, ինչպես եւ խոսքի ազատության ու բազմակարծության սահմանափակման ուղղությամբ:

Չգիտենք՝ լա՞նք, թե՞ խնդանք, որ մինչեւ օրս Հայաստանի պատկան մարմիններն ուշադրություն չեն դարձրել դատական աննախադեպ այդ ակտին:

Իհարկե, «Սյունյաց երկիրն» ու նրա խմբագիրն առանց փաստաբանի կմասնակցեն դատաքննություններին եւ անպայման, այդ ճակատում եւս, ջախջախիչ պարտության կմատնեն գաղութարարներին. հայցադիմումներն ու հայցվորներն այնքան անգրագետ են ու անհեթեթ, որ փաստաբան վարձելու կարիք չկա եւ չի լինի:

Իհարկե, տվյալ գործով առաջին իսկ նախնական դատական նիստում անվստահություն կհայտնվի դատավոր Էդիկ Ավետիսյանին (մյուս դատավորներին բացարկ հայտնելու հիմքեր չունենք):

Իհարկե, մենք հակընդդեմ ապահովման միջնորդություններ կներկայացնենք դատարան ոչ միայն Սահմանադրության 42-րդ հոդվածի եւ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի գործողությունը Սյունիքում վերականգնելու ուղղությամբ, այլեւ խմբագրի անձնական ամբողջ գույքի վրա դրված կալանքը վերացնելու ուղղությամբ (վերջին հանգամանքը նույնպես կիրառվել է խմբագրին դատական հավասար մրցակցությունից զրկելու համար):

Իհարկե, բոլոր գործերի դատաքննությունը կփորձենք տեղափոխել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որովհետեւ հայցադիմումներն (առանց բացառության) ընդդատյա են մեր մարզի դատարանին, բայց…

**Ինչպե՞ս հասկանալ, որ թավշյա հեղափոխության հաղթանակից հետո անգամ Սյունիք ներխուժած գաղութարարները կարողանում են շարունակել պատերազմը խոսքի ազատության դեմ եւ իրենց կամքը պարտադրել անկախ հորջորջվող դատական ատյանի հանդեպ նույնիսկ:**

**Եվ մինչեւ ե՞րբ է շարունակվելու այդ ամենը, մինչեւ ե՞րբ է Սյունիքի ընդերքի հարստությունը, երկրամասի հիմնախնդիրների լուծմանը ծառայեցվելու փոխարեն, անեծք լինելու ոչ միայն մեր լեռնաշխարհի, այլեւ ամբողջ Հայաստանի ու հանրապետության պետական կարգի համար:**

**«Սյունյաց երկիր»**

# Զանգեզուրի պղնձամոլիբդենայինում ստուգումները երկարաձգվել են 75 օրով




Սեպտեմբերի 10-ից ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ստուգումներ է սկսել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում: Ըստ նախնական հայտարարության՝ ստուգումները պետք է տեւեին 15 աշխատանքային օր:

Ի՞նչ ընթացքի մեջ են ստուգումները:

Հարցը պարզելու նպատակով սեպտեմբերի 25-ին հեռախոսազրույց ունեցանք տեսչական մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանի հետ:

**-Պարոն Գրիգորյան, սեպտեմբերի 10-ին Ձեր գլխավորած տեսչությունը ստուգումներ է սկսել Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Ի՞նչ ընթացքի մեջ են ստուգումները, չէ՞ որ 15 աշխատանքային օրը շատ քիչ է նման հսկա ձեռնարկությունում ինչ-որ խնդիրներ պարզելու, ստուգելու համար:**

-Այո, իսկապես, 15 աշխատանքային օրը քիչ է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում լիարժեք ստուգումներ իրականացնելու համար, քանի որ 2015 թվականից ի վեր ձեռնարկությունում բնապահպանական մասով ստուգումներ չեն իրականացվել, այնպես որ այդտեղ չափազանց շատ գործ կա անելու: Ճիշտ է, «Ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքը սահմանափակումներ ունի, սակայն օրենքում մի բացառություն կա. 4-րդ հոդվածի համաձայն՝ եթե ստուգվող ժամանակաշրջանի որեւէ ֆինանսական տարվա արդյունքով 3 մլրդ դրամի եւ ավելի իրացման շրջանառութուն ունի տվյալ կազմակերպությունը, ապա մինչեւ 75 աշխատանքային օրով կարող է երկարաձգվել ժամկետը: Այնպես որ՝ մենք 15 գումարած 75 օր ունենք, բայց դա ամենեւին էլ չի նշանակում, որ 75 աշխատանքային օրն էլ օգտագործելու ենք: Այդքան ժամանակ անհրաժեշտ է, որ առանց շտապողականության, հիմնավոր եւ համապարփակ ստուգում կարողանանք իրականացնել ընկերությունում: Միգուցե 20 օր կպահանջվի, միգուցե 10 կամ 35, ստույգ չեմ կարող ասել: Բայց որպեսզի ժամկետի մեջ սահմանափակված չլինենք, ես արդեն հանձնարարական եմ տվել, որ ստուգման ժամկետը 75 օրով երկարաձգվի:

**-Եվ այդ ժամկետում Ձեր առջեւ ծառացած խմդիրները կլուծե՞ք:**

-Կարծում եմ, որ ավելի քիչ ժամանակն էլ կբավարարի եւ ոչ 75 լիարժեք աշխատանքային օրը, բայց որպեսզի շտապողականություն չցուցաբերենք եւ կարողանանք լիարժեք ուսումնասիրություն իրականացնել, այդքան ժամանակը բավարար կլինի:

Ի վերջո բոլորս գիտակցում ենք, թե ինչ հսկա ձեռնարկության հետ գործ ունենք…

**-Արդյո՞ք վաղաժամ է խոսել ստուգման առաջին արդյունքների մասին:**

-Խնդիրը ոչ թե վաղաժամ լինելն է, այլ «Վարչարարության եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաեւ «Ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի համաձայն դա գործունեության այնպիսի տեսակ է, որ պիտի գաղտնի պահվի, մենք իրավունք չունենք տրամադրելու տեղեկատվություն, քանի դեռ ստուգումները չեն ավարտվել, եւ ստուգման արդյունքով վեր հանված խնդիրները կամ տվյալ արդյունքները ստուգման ակտով չեն ներկայացվել: Միայն ստուգման ավարտից հետո իրավասու կլինենք որոշակի տեղեկատվություն տրամադրել: Մինչ այդ օրենքը մեզ թույլ չի տալիս վարչարարության արդյունքում վեր հանված խմդիրների վերաբերյալ տեղեկատվություն տարածել:

**-Մի հարց եւս ընթացակարգային բնույթի, որ գաղտնիք չի կարող լինել: Տեսչական մարմնի ստուգումներն ընդգրկել են միայն ընդերքին առնչվող հարցե՞րը, թե՞ նաեւ բնապահպանական ոլորտը:**

-Ոչ, ոչ, դա գաղտնիք չէ, ստուգումները վերաբերում են ե՛ւ ընդերքին, ե՛ւ բնապահպանությանը: Ժամկետի մասով այսպես ասեմ. բնապահպանական հատվածը սկսվում է 2015-ից:

**-Ստուգումների ավարտին կարո՞ղ ենք սպասել արդյունքների պաշտոնական հրապարակմանը:**

-Այսպես ասենք՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվությունը չի կարող գաղտնի համարվել, իսկ վարչարարության շրջանակներում վեր հանված այնպիսի հարցեր, որ առնչվում են ընկերության տեխնոլոգիական գործընթացներին (գյուտ, ռացիոնալիզատորական առաջարկ եւ այլն), որոնք ընկերության համար առեւտրային գաղտնիք են ներկայացնում, այդ տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման: «Ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ եթե ընկերությունը համաձայնություն է հայտնում, չի առարկում այդ հարցի վերաբերյալ, ապա այդ տեղեկատվությունը եւս կարող է հրապարակվել: Ամեն դեպքում ստուգումներից հետո դրանց արդյունքների մասին տեղեկացնելու ենք՝ ապահովելով օրենքով սահմանված տեղեկատվության գաղտնիության պահանջները:

**-Քանի որ խնդրո առարկա հարցը հանրային մեծ հետաքրքրություն ունի, ըստ էության հանրային գերակա շահ է, ստուգումների ժամանակ կփորձենք ընթացակարգային հարցերի շուրջ ձեզանից հավելյալ տեղեկություններ ստանալ, եթե, իհարկե, հնարավոր է:**

-Անշուշտ, մենք ի սկզբանե որդեգրել ենք այնպիսի մոտեցում, որ առավելագույնի սահմաններում պետք է հանրամատչելի լինի տեղեկատվությունը՝ ապահովելով, իհարկե, օրենքով սահմանված գաղտնիության որոշակի շրջանակ, որն ապահովում է ամբողջ ստուգման գործընթացի օրինականությունը: Այլապես հարվածի տակ կդնենք ստուգման ամբողջ գործընթացի օրինականությունը: Այդ պատճառով ստիպված ենք որոշակի տեղեկատվություն չտրամադրել: Բայց այն տեղեկատվությունը, որ ենթակա չէ վարչարարության շրջանակում գաղտնի պահվելու, լիարժեք կտրամադրենք:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**
**2018-09-27**

# Բնապահպանության նախարարը տեղյա՞կ է, թե ինչ գործարան է կառուցվում Սիսիան համայնքի Նորավան գյուղում եւ ով է կառուցում

Սյունիքում հիմա գործազրկության եւ աղքատության այնպիսի վիճակ է, չլուծված խնդիրների այնպիսի հանդես է, որ որեւէ աշխատանք կատարելը, որեւէ հարց լուծելը՝ փոքր-ինչ հանրային նշանակությամբ, ոգեւորությամբ է ընդունվում:

Նորավան գյուղի բնակիչներն էլ (մեծամասամբ) ուրախությամբ են ընդունել գյուղի մերձակայքում ասֆալտի գործարան հիմնելու նորությունը, մանավանդ որ նախաձեռնության հեղինակները հավաստիացրել են, թե ասֆալտ եւ խիճ արտադրող այդ ձեռնարկությունում մոտ 70 աշխատատեղ է բացվելու, մանավանդ որ գործարան հիմնող կազմակերպությունը փորձում է բարեկարգել Մ2 մայրուղուց Նորավան ձգվող ավտոճանապարհը, որ տարիներ շարունակ խայտառակ վիճակում է գտնվում:

Իհարկե, խոստումներն ու սպասելիքները չափազանցված են ինչ-որ չափով, հատկապես ենթադրվող աշխատատեղերի առումով. ոլորտի մասնագետները տարակուսում եւ չեն պատկերացնում, թե նման արտադրամասում ինչպե՞ս կարող է յոթ տասնյակ աշխատողի պահանջ լինել:

Եւ, այնուհանդերձ, մթնոլորտը հօգուտ կառուցողի է, ինչում համոզվեցինք գյուղաբնակների հետ սեպտեմբերի 15-ի հանդիպման ժամանակ:

Ինչպես բոլոր դեպքերում եւ բոլոր տեղերում, Նորավանում նույնպես հնարավոր չէր միակարծություն ակնկալել. մի քանի հոգի նախապես էին դիմել «Սյունյաց երկրի» խմբագրություն՝ լրագրող գործուղելու եւ տեղում իրենց մտահոգություններին ծանոթանալու խնդրանքով:

Նախաձեռնության ընդդիմախոսները կարծում են, թե ասֆալտի գործարանի հարեւանությամբ այլեւս անհնարին կլինի նորմալ կյանք վարել գյուղում, եւ հատկապես այն դեպքում, եթե գործարանն աշխատի մազութով ու ոչ թե գազով:

Կա նաեւ հողերի խնդիր. գործարանի համար անհրաժեշտ մոտ երեք հա հողատարածքը, թեեւ համայնքային ֆոնդից է լինելու, ներկայումս օգտագործվում է գյուղացիների կողմից:

Այդ եւ մյուս հարցերի պատասխանն իմանալու համար նախեւառաջ եղանք կառույցում:

Մոտ հազար քառակուսի մետր տարածքի վրա հողային աշխատանքներ են կատարվել:

Կանգնած էին տարբեր մեխանիզմներ, բայց առավոտվա ժամը 10-ի դրությամբ դեռ չէին աշխատում (նախորդ ու հաջորդ օրերին էլ չեն աշխատել):

Աշխատանքների պատասխանատուն, ինչպես ներկայացրին, Դավիթ Ավետիսյան անուն- ազգանունով երիտասարդն էր:

Սակայն գործընկերների հորդորով նա հրաժարվեց զրուցել մեզ հետ, երբ իմացավ, որ լրագրող ենք եւ կոնկրետ լրատվամիջոց ենք ներկայացնում:

Պահանջվեց մեր ինքնությունը հաստատող փաստաթղթեր, իսկ փաստաթղթեր չէինք վերցրել՝ համոզված լինելով, որ Սյունիքի բոլոր բնակավայրերում մեզ ճանաչում են: Բայց այնտեղ ոչ տեղացիներ էին եւ, բնականաբար, մեզ չէին ճանաչում:

Մի խոսքով՝ կառույցի աշխատակիցները հրաժարվեցին պատասխանել մեզ հետաքրքրող հարցերին, նույնիսկ չասացին, թե ով կամ որ կազմակերպությունն է Նորավանում ասֆալտի գործարան հիմնում:

**-Եկեք երկու-երեք օր հետո, երբ մեր ղեկավարներն այստեղ կլինեն,-** ասաց ներկաներից մեկը:

Մեզ մտահոգող հարցերի պատասխանը փորձեցինք գտնել գյուղում:

Զրուցեցինք նորավանցիների հետ…

Առավել փաստարկված զրույց տեղի ունեցավ

էջ 6

# Ահազանգ. ԶՊՄԿ-ի կեղտաջրերը լցվում են Սյունիք գյուղի ոռոգման ջրանցք

ԷկոԼուրն ահազանգ է ստացել Սյունիքի մարզի Սյունիք գյուղից այն մասին, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կեղտաջրերը լցվում են գյուղի ոռոգման ջրանցք:

Ահազանգի տեքստում նշված է.

«Սյունիք գյուղը Կապան եւ Քաջարան խոշորացված համայնքների գյուղմթերքի հիմնական մատակարարն է: 2013-2014 թթ. ՄԱԶԾ/ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի եւ ԵԱՀԿ-ի կողմից տրամադրված աջակցության շնորհիվ վերականգնվել է Սյունիք գյուղի համար այլընտրանքային ջրանցք, որի շնորհիվ գյուղը մի քանի տարի ստացել է մաքուր ջուր: Այստեղ հասնող մաքուր ջրի քանակը կազմում է 80-120 լ/վ եւ ճիշտ կառավարելու դեպքում, ըստ օրենսդրությամբ ընդունված նորմերի, բավարար է 80-120 հեկտար հողատարածք ոռոգելու համար: Մինչ այլընտրանքային ջրանցքի վերականգնումը, այդ գյուղի հողերը ոռոգվում էին Արծվանիկի պոչամբարից դուրս եկած եւ մեխանիկական



մաքրում անցնելուց հետ Ողջի գետ թափված ջրով: Արդյունքում, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնի 2007-2008թթ. ուսումնասիրությունների համաձայն, Սյունիք գյուղում աճած բույսերը համարվել են չափազանց վտանգավոր օգտագործման համար: Վերջերս կատարվել է նոր կառուցված ջրանցքի ջրառի մասնակի քանդում, եւ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի աղտոտված ջրերը միացվել են մաքուր ջրին, հավանաբար ջրի քանակն ավելացնելու համար: Վարկած կա, որ դա արել են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոմպակայանի աշխատակիցները Սյունիք գյուղի ջրվորի օգնությամբ, որպեսզի պոմպերի միջոցով մաքուր ջուրը տանեն՝ իրենց հողերը ոռոգելու, իսկ կոմբինատի կեղտաջրերը միացրել են ջրանցքին, որպեսզի Սյունիք գյուղի բնակիչները չդժգոհեն ջրի սակավությունից»:

ԷկոԼուրն ահազանգն ուղղել է ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանին, որպեսզի տեսչական մարմինը

- ստուգումներ անցկացնի եւ պարզի, թե ինչպես են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կեղտաջրերը հայտնվել Սյունիք գյուղի ոռոգման ջրանցքում,

- գնահատի շրջակա միջավայրին կեղտաջրերով ոռոգման արդյունքում պատճառված վնասը եւ սահմանի մեղավորի կողմից փոխհատուցման տրամադրում հողօգտագործողներին և պետությանը,

- պարտավորեցնի, որպեսզի կեղտաջրերը հեռացվեն ջրանցքից եւ ապօրինի ջրառ չիրականացվի,

- պարտավորեցնի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին՝ տեղադրել քիմիական մաքրման կայաններ արտադրական կեղտաջրերի մաքրման համար:

Նշենք, որ ներկայում տեսչական մարմինը ստուգումներ է անցկացնում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ում: Տեսչական մարմնի ղեկավար Արթուր Գրիգորյանը «ԷկոԼուր»-ին պատասխանել է, որ ահազանգն ուսումնասիրվելու է իրականացվող տեսչական ստուգումների ընթացքում: Ստուգումների ավարտից հետո կտրամադրվի տեղեկատվություն արդյունքների վերաբերյալ:

**ecolur.org**

# Որ անվտանգ ու հուսալի լինի պոչամբարը



«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերությունը մտադիր է իրականացնել Գեղանուշի պոչամբարի անվտանգությունն ու հուսալիությունը բարձրացնելու աշխատանքներ: Նախատեսվող գործունեության շրջանակում ամրացվելու են պոչամբարի հիդրոտեխնիկական կառույցները եւ բարձրացվելու է դրանց սեյսմակայունությունը, նորացվելու են ռեսուրսը սպառած ենթակառուցվածքները: Պոչամբարի գործող աշխատանքային նախագծով սահմանված ծավալը մնալու է անփոփոխ:

Սեպտեմբերի 18-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նախնական փորձաքննության գործընթացի շրջանակում Կապանի համայնքապետարանի դահլիճում տեղի ունեցավ նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլի հանրային քննարկում: Միջոցառմանը կոմբինատի աշխատակիցներից, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից եւ բնապահպաններից զատ մասնակցում էին «Հայհիդրոնախագիծ» ինստիտուտի մասնագետները:

Օրվա բանախոսը՝ կոմբինատի հասարակայնության հետ կապերի եւ սոցիալական քաղաքականության գծով տնօրենի տեղակալ Վահրամ Ավագյանը նախ ներկայացրեց ձեռնարկության արտադրատնտեսական ցուցանիշները, նշելով, որ 2018թ. առաջին կիսամյակում ընկերությունն արդյունահանել է 311 հազար տոննա հանքաքար, արտադրվել է 0.4 տոննա ոսկի, վեց տոննա արծաթ, 800 տոննա պղինձ եւ 3000 տոննա ցինկ: Հանքաքարի հարստացման այն տեխնոլոգիան, որ կիրառվում է կոմբինատում, ենթադրում է թափոնների պոչերի գոյացում, դեռ ավելին՝ հանքաքարի մեծ մասն է վերածվում պոչանքի, ու այդպիսի լեռնահանքային համալիրները պետք է լուծեն այդ պոչանքի եւ բնապահպանական տեսանկյունից անվտանգ պահեստավորման խնդիրը: Կոմբինատը թափոնների պոչերը պահեստավորում է Գեղանուշի պոչամբարում, որի անվտանգության ու հուսալիության բարձրացման ծրագիրն էլ ներկայացված էր հանրային քննարկման: Առավել խնդրահարույցը պոչամբարի հյուսիսային պատվարն է, որի պատշաճ անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է 900 հազար խորանարդ մետր լրաբեռնում: Այլապես 8.5 բալ եւ ավելի երկրաշարժ լինելու դեպքում հնարավոր է պատվարի փլուզում եւ ապարախյուսի արտահոսք, որ կարող է ծածկել պատվարից ներքեւ գտնվող, դեպի Գեղանուշ գյուղ տանող ճանապարհը, մասնավորապես խախտել Կապան-Երեւան միջպետական ճանապարհի անցունակությունը: Իսկ վերոնշյալ լրաբեռնման դեպքում (900 հազար խորանարդ մետր) կապահովվի պատվարի անվտանգությունը եւ սեյսմակայունությունը, ընդ որում՝ անփոփոխ կմնա պոչամբարի ծավալը՝ 11 միլիոն խորանարդ մետր:

Վահրամ Ավագյանը ներկաներին հավաստիացրեց, որ պատվարի լրաբեռնումն իրականացվելու է աստիճանաբար եւ այդ միջոցառման շնորհիվ Գեղանուշի պոչամաբարի հյուսիսային պատվարի լիարժեք սեսմակայունություն կապահովվի: Նաեւ տեղեկացրեց, որ հանրային քննարկման նպատակն է ճշտել հանրության առաջնային վերաբերմունքը, որից հետո առավել մանրամասն կվերամշակվի աշխատանքային նախագիծը, ինչը շրջակա միջավայրի վրա ազդեցության հիմնական գնահատման փաստաթղթի հետ կիրապարակվի:

Ըստ էության բանախոսին հարցեր չուղղվեցին, միայն նա ավելացրեց, որ հարցեր տալու ժամկետը 18 աշխատանքային օր է՝ հանրային քննարկման իրազեկման օրվանից սկսած, այսինքն՝ սեպտեմբերի 5-ից, երբ հանրային քննարկման մասին հայտարարությունը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Բնապահպանության նախարարը տեղյա՞կ է, թե ինչ գործարան է կառուցվում Սիսիան համայնքի Նորավան գյուղում եւ ով է կառուցում

էջ 5 գյուղի վարչական ղեկավար Սլավիկ Պապյանի հետ:

Պարզվում է՝ գյուղի վարչական ղեկավարն էլ չգիտի, թե ով կամ որ կազմակերպությունն է իր ղեկավարած բնակավայրի անմիջական հարեւանությամբ ասֆալտի գործարան հիմնում:

Ըստ վարչական ղեկավարի՝ աշխատանքներն առայժմ կատարվել են մոտ հազար քառակուսի մետր հողատարածքի վրա, որ համայնքային է՝ վարձակալությամբ գյուղացիներից մեկին տրված, եւ ունի գյուղատնտեսական նշանակություն:

Վարչական ղեկավարին հատկապես այդ նախաձեռնության բնապահպանական հետեւանքները են հետաքրքրում, որի վերաբերյալ, համոզված է, սպառիչ տեղեկություններ կստանա հանրային քննարկման ժամանակ, ինչը դեռեւս տեղի չի ունեցել:

Սլավիկ Պապյանը, ինչպես եւ մյուս գյուղացիները, տեղյակ չեն՝ կա՞ օրինական հողհատկացում, թե՞ ոչ, կա՞ քաղաքաշինական թույլտվություն, թե՞ ոչ, կա՞ հողի կատեգորիայի փոփոխություն, թե՞ ոչ, կատարվե՞լ է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության փորձաքննություն, թե՞ ոչ:

Վարչական ղեկավարին մասնավորապես ուրախացնում է, որ ավտոմայրուղուց գյուղ ձգվող ճանապարհին (մարզային ենթակայության է) նախաձեռնության հեղինակները փորձում են աշխատանքներ կատարել (տեղ-տեղ երեւում է գրեյդերի աշխատանքի հետքը, որոշ տեղերում ինչ-որ խիճ էր թափված կամ փռված):

**-Քանի դեռ մեզ վնաս չեն տալիս եւ քանի դեռ մեր ճանապարհն են ուզում կարգի բերել, ես ձգտում եմ չխառնվել՝ սպասելով նաեւ, որ մտահոգող բոլոր հարցերի պատասխանը կտրվի հանրային քննարկման ժամանակ, ի վերջո որոշիչ խոսքը բնակիչներինն է լինելու, եւ մենք մեր խոսքը կասենք,-** զրույցն այդպես եզրափակեց Սլավիկ Պապյանը:

Ըստ գյուղացիների՝ գործարանը հիմնողները չէին կարող աշխատանքները սկսել առանց համայնքային իշխանության օրինական կամ անօրինական թույլտվության ու երաշխավորության:

Դատելով հանրապետությունում ընթացող նմանատիպ գործընթացներից, կարելի է ենթադրել, որ բնապահպանական բնույթի ամեն մի աղմուկի հիմքում, այնուամենայնիվ, ինչ-որ շահերի բախում է եւ ուրիշ ոչինչ:

Արդյո՞ք նորավանյան խնդրի հիմքում նույնպես շահերի բախում է:

Եթե անգամ այդպես չէ, ապա ինչպե՞ս բացատրել իրողությունը, որ Սիսիանում վաղուց գոյություն



ունեցող համանման երեք գործարանի կողքին եւս մեկն էլ պիտի կառուցենք: Իսկապե՞ս դրա պահանջարկը կա, իսկ միգուցե արտադրվող ասֆալտը մեր երեւակայության ուժով ուրիշ տարածաշրջաննե՞ր ենք տեղափոխելու:

Նորի՞ց ազդեցության ոլորտների կռիվ է, նորի՞ց ինչ-որ մեկին ուզում ենք խաղից հանել, թե՞ ազնիվ մրցակցություն է:

Իսկ տեղական իշխանությունը, որի թույլտվությամբ ու երաշխավորությամբ կառուցվում է նորավանյան արտադրամասը, ի՞նչ բացատրություն ունի. ազնիվ մրցակցության համա՞ր է ճանապարհ հարթվում, թե՞ ինչ-որ մեկի ճանապարհն է փակվում:

Եվ այդ հարցերը, նաեւ խորհրդավորությունը կարող է մեկ րոպեում հօդս ցնդել, եթե նախաձեռնության հեղինակ կազմակերպությունը բացի փակագծերը եւ իր ծրագրերը ներկայացնի:

Ասում են՝ գործարան կառուցող կազմակերպությունը «ԱԱԲ» ՍՊ ընկերությունն է (տնօրեն՝ Արմեն Բադալյան):

Ճի՞շտ է, թե՞ սխալ՝ ժամանակը ցույց կտա…

Ի դեպ, Սյունիքի մարզպետարանն էլ կարող է լույս սփռել այդ ամենի վրա, քանի դեռ համայնքային իշխանությունը ջուրը բերանն է առել:

Իսկ մինչ այդ բնապահպանության նախարարը կարո՞ղ է ասել՝ տեղյա՞կ է, թե ինչ գործարան է կառուցվում Սիսիան համայնքի Նորավան գյուղում եւ ով է կառուցում:

Կողմերի մի փոքր անկեղծություն, օրինապահություն, եւ ամեն ինչ իր տեղը կընկնի…

**Սամվել Ալեքսանյան**
**20 սեպտեմբերի 2018թ.**

# «Արարատցեմենտի» կապանյան արտադրամասի կառուցման առնչությամբ քրգործ է հարուցվել

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի կողմից Կապանում ցեմենտի աղացման արտադրամասի կառուցման առնչությամբ քրեական գործ է հարուցվել: Գործը, սակայն, անմիջականորեն այս ընկերությանը չի վերաբերում:

Մեզ հետ հեռախոսազրույցում գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնի պետ Արեւիկ Խաչատրյանը հայտնել է, որ գործը հարուցվել է օգոստոսի 6-ին Քրեական օրենսգրքի 3152 հոդվածով, որը վերնագրված է այսպես՝ **«Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաեւ շենքերի եւ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելը»**:

Այս հոդվածը վերաբերում է պաշտոնատար անձանց, այսինքն՝ քրգործի թիրախում ոչ թե «Արարատցեմենտն» է, այլ պաշտոնյաները: Սակայն գլխավոր դատախազությունը որեւէ մանրամասն չի հայտնում՝ նշելով, որ գործը ՀՀ քննչական կոմիտեի վարույթում է, ընթանում է նախաքննություն:

Ահա, թե ինչ է սահմանում նշված քրեական հոդվածը. **«Պաշտոնատար անձանց կողմից, որոնց վրա իրավական ակտերով դրված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի եւ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու պարտականությունը, հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի եւ շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու միջոցներ դիտավորությամբ չձեռնարկելը, ինչպես նաեւ հողամասերն ինքնակամ զավթած, ինքնակամ կառույց իրականացնող կամ իրականացրած անձանց նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները դիտավորությամբ չկիրառելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով եւ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով կամ ազատազրկմամբ մեկից երկու տարի ժամկետով եւ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով»** (ընդգծումը մերն է- Մ.Մ.): Այսինքն՝ մեղավորներին սպառնում է 3 մլն դրամ տուգանքից մինչեւ 1-2 տարվա ազատազրկում:

Այս տարեսկզբին գրել էինք, որ «Ծառուկյան» դաշինքի ղեկավար, ԱԺ պատգամավոր Գագիկ Ծառուկյանին պատկանող ընկերությանը Կապանի համայնքապետարանը 600 հազար դրամով տուգանել է ինքնակամ, առանց թույլտվության շինարարություն իրականացնելու պատճառով: Նախկին համայնքապետ Աշոտ Հայրապետյանը մեզ տեղեկացրել էր, որ «Արարատցեմենտին» տուգանելու որոշում են կայացրել դեռ 2017-ի նոյեմբերի 13-ին:

Միայն դրանից հետո՝ դեկտեմբերի 22-ին էր ՓԲԸ-ն դիմել համայնքապետարան՝ ցեմենտի աղացման արտադրամասի կառուցման համար նախագծման թույլտվություն ստանալու խնդրանքով: Դեկտեմբերի 25-ին ընկերությանը տրամադրվել էր թիվ 13 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

Հետագայում՝ ապրիլի 9-ին, արտադրամասի տարածքում աշխատող բանվորները մեզ հայտնել էին, որ շինաշխատանքները 3-4 ամսից կավարտեն: Սա տարօրինակ էր, քանի որ ընկերությունը դեռ շինթույլտվություն էլ չէր ստացել, ընթացքի մեջ էր շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը: Այս պարագայում Աշոտ Հայրապետյանին հարցրել էինք, թե ինչո՞ւ համայնքապետարանը չի կարողանում վերահսկել իր վարչական տարածքում ընթացող շինարարությունը, որը, փաստորեն, օրենքից էջ 8

# Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցում բոյկոտում են երկրի առաջին փոխվարչապետի որոշումը. ովքե՞ր, ինչո՞ւ



Սեպտեմբերի 18-ից Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցում տեղի են ունենում իրադարձություններ, որոնք առաջին հայացքից կամ առերեւույթ ուղղված են Շուշանիկ Հովսեփյանին այդ դպրոցի տնօրեն նշանակելու դեմ:

Իրադարձությունների ընթացքին փոք–ինչ ծանոթանալուց եւ հետաքննելուց հետո, սակայն, բախվում ենք այլ իրողությունների:

Փաստորեն Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջին տեղակալ Արարատ Միրզոյանը, իր լիազորությունների սահմաններում, սեպտեմբերի 10-ին Գորիսի N 2 հիմնական դպրոցում տնօրեն է նշանակել: Եվ երբ նշանակման մասին սեպտեմբերի 18-ին իմացել են դպրոցում, կոլեկտիվի անդամների մի մասն անհամաձայնություն է հայտնել այդ նշանակման հետ:

**Հարց 1-ին. ինչո՞ւ է հանրակրթական դպրոցի տնօրեն նշանակվել հանրապետության առաջին փոխվարչապետի կողմից:**

Մինչ այդ՝ երկու անգամ, դպրոցի տնօրենի թափուր տեղի համար մրցույթ էր հայտարարվել (24 օգոստոսի 2018թ. եւ 31 օգոստոսի 2018թ.):

Երկու անգամ էլ քվորումի բացակայության պատճառով կառավարման խորհրդի նիստը տեղի չի ունեցել:

Եվ առաջին փոխվարչապետը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 28.1 հոդվածով, առաջարկել է օրենքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թեկնածու Շուշանիկ Հովսեփյանի հետ:

Դա սեպտեմբերի 10-ին էր:

**Հարց 2. ինչպե՞ս է Շուշանիկ Հովսեփյանի անունը հայտնվել ՀՀ առաջին փոխվարչապետի սեղանին:**

Դպրոցի տնօրենի չորս հավակնորդի անուններն էլ Սյունիքի մարզպետարանն է ներկայացրել առաջին փոխվարչապետին՝ Արամ Մուսախանյան, Շուշանիկ Հովսեփյան, Սիրուն Ջաղայան, Գայանե Գալստյան. այդպես է սահմանված գործող կարգով:

Եվ առաջին փոխվարչապետը նախապատվությունը տվել է Շուշանիկ Հովսեփյանին, ով 12 տարի աշխատել է այդ դպրոցում՝ Հայոց լեզվի եւ գրականության, ապա եւ Հայոց եկեղեցու պատմություն առարկայի ուսուցչուհի, իսկ վերջին երկու տարում՝ դպրոցի տնօրենի տեղակալ՝ մասնագիտացված կրթական աջակցության գծով:

**Հարց 3. ինչո՞ւ է օգոստոսի 24-ին եւ օգոստոսի 31-ին ձախողվել դպրոցի կառավարման խորհրդի նիստը, որի ընթացքում պետք է ընտրվեր դպրոցի տնօրեն:**

Երկու դեպքում էլ՝ քվորումի բացակայության պատճառով:

Երկու դեպքում էլ կառավարման խորհրդի նիստին չի մասնակցել կառավարման խորհրդի նախագահ Միլենա Գասպարյանը:

Հարցերի շրջանակը, սակայն, դրանով չի ավարտվում:

Թիվ 2 դպրոցում իրադարձությունները նման ընթացք չէին ունենա, եթե կառավարման խորհուրդն իր բարձրության վրա գտնվեր:

Մինչդեռ, խորհրդի նախագահը տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին նվիրված երկու նիստին չի մասնակցել:

Խորհրդի նախագահը, ինչպես նշեցինք, Միլենա Գասպարյանն է՝ Սյունիքի հեռացված մարզպետ Վահեի օգնականը:

Վահեի հեռանալուց հետո նա մի անգամ՝ հունիսի վերջերին, այցելել է դպրոց եւ հավաստիացրել, որ ինքը չի պատրաստվում հեռանալ, որ ինքը դեռ անելիք ունի:

Միլենան դպրոցի խորհրդի կազմում ընդգրկվել էր 2017-ի վերջին կամ 2018-ի սկզբին՝ Գորիսի համայնքապետի տեղակալ Մենուայի հետ…

Հիշեցնենք, որ դպրոցի 20 տարվա տնօրենն էր ոչ անհայտ Սիրուշը, ում պաշտոնավարման ժամկետը լրացել էր 2018թ. փետրվարի 24-ին:

Հենց այդ ժամանակ էլ դպրոցում պետք է նշանակվեր մրցույթ՝ տնօրենի թափուր տեղի համար:

Վահեին Սյունիքից վտարելուց հետո Սիրուշի խնդիրն օրակարգային դարձավ…

Ու սկսվեց տնօրենի աթոռի համար պայքարը:

Եվ, այդ բոլորով հանդերձ, ի՞նչ ունենք արդյունքում. երկրի առաջին փոխվարչապետի որոշումը վիճարկվում է Գորիսի N 2 հիմնական դպրոցի մի քանի ուսուցիչների (որքան էլ մեծամասնություն են կազմում) կողմից:

Այդ ամենին զուգահեռ սեպտեմբերի 24-ին ուսուցիչների մի մասը կազմակերպեց դասադուլ, իսկ սեպտեմբերի 28-ին (մոտ 1-1,5 ժամ տեւողությամբ) ուսուցիչները շրջափակեցին Կապան-Գորիս ավտոմայրուղին: Օրեր առաջ էլ նրանք դիմել են ՀՀ առաջին փոխվարչապետին եւ ԿԳ նախարարին՝ ս.թ սեպտեմբերի 10-ի որոշումը չեղարկելու պահանջով:

Սեպտեմբերի 28-ին Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանն էր ժամանել դպրոց՝ մանկավարժների պահանջով՝ ստեղծված իրավիճակը քննարկելու համար:

Մարզպետը հորդորեց՝ սպասել առաջին փոխվարչապետին հղած (32 հոգու ստորագրությամբ) դիմումի պատասխանին, որից հետո կրկին կհանդիպի ու կքննարկի իրավիճակը:

Գորիսի N 2 հիմնական դպրոցում տեղի ունեցող իրադարձությունները խնամքով եւ հետեւողականորեն լուսաբանում էին եւ են «Զանգեզուր TV» հեռուստաստուդիան եւ գորիսյան ֆեյսբուքյան էջերից մեկը:

Ուշադիր հետեւելով այդ լուսաբանումներին՝ դժվար չէ տեսնել, որ ելույթ ունեցողները բռնել են Շուշանիկ Հովսեփյանի պատիվն ու արժանապատվությունը արատավորելու ճանապարհը՝ չհիմնավորելով սակայն, թե ինչու նա չի կարող ղեկավարել դպրոցը: Միակ պատճառը, որ նշում են միաբերան, տնօրենի բանասիրական գիտելիքների պակասն է իբր, ինչի հետ, մինչդեռ, համաձայն չեն նրա ուսանողական տարիների ընկերները եւ դասախոսները, ինչպես եւ աշակերտներն ու նրանց ծնողները:

Շատ տարօրինակ է, որ 12 տարվա գործընկերուհու գիտելիքները յուրովի մեկնաբանելու եւ գնահատելու, ասել է թե՝ ատեստացիոն հանձնաժողովի իրավունք են իրենց վերապահել դպրոցի մի քանի ուսուցչուհի:

Մեկ ուրիշ դիտարկում եւս՝ ովքե՞ր եւ ինչո՞ւ են վիճարկում երկրի առաջին փոխվարչապետի որոշումը. դրանք շատ կարեւոր հարցեր են, որոնց պատասխանը, դատելով հեռուստահաղորդումներից, դեռեւս չի տրվել, որոնց պատասխանը, կարծում ենք, պետք է տրվի:

Ոչ պակաս տարօրինակ է իրավիճակը, որ դպրոցի կառավարման խորհրդի անգործության հետեւանքով ստեղծված իրավիճակում դպրոց չի այցելում կառավարման խորհրդի նախագահը՝ իրավիճակի գլխավոր պատասխանատուն, եւ, որ ոչ պակաս զարմանալի է, նրան հետ կանչելու հարցով ոչ ոք դեռեւս մտահոգված չէ:

Եվ, այնուամենայնիվ, ինչո՞ւ է դպրոցի մանկավարժական կոլեկտիվի մի մասի կողմից անցանկալի անձ հայտարարվել Շուշանիկ Հովսեփյանը. դա հանգամանալից ուսումնասիրման կարոտ հարց է:

Մինչեւ հիմա, ըստ դպրոցից ստացած տեղեկությունների, Շուշանիկ Հովսեփյանը դիտվում է իբրեւ հեռացած տնօրենի՝ Սիրուշ Ակլունցի թեկնածուն, որը, մինչդեռ, իրականությանը չի համապատասխանում:

Իրականում դպրոցում տեղի է ունենում տնօրենի աթոռի համար կռիվ, անձնական շահերի բախում, ինչի համար եւ մյուս հավակնորդների շահերն առայժմ համընկնում են:

Չի բացառվում, որ Շուշանիկ Հովսեփյանի հրաժարականից հետո, եթե առաջին փոխվարչապետը տեղի տա, կրքերը շարունակվեն բորբոքված մնալ…

Անտարակույս, գնահատելի է Շուշանիկ Հովսեփյանի զսպվածությունը, բայց եւ հասկանալի չէ նրա լռությունը, բարձրացվող հարցերին եւ հնչող մեղադրանքներին չպատասխանելու նրա՝ չափից ավելի համառությունը:

**Սամվել Ալեքսանյան**

# Արթուր Վանեցյանն ընտրվեց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ



Հայաստանյան ֆուտբոլի կյանքում սպասվող փոփոխությունը կայացավ: Սեպտեմբերի 22-ին կայացավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի ընտրություն: Հայաստանի ազգային անվտանգության ծառայության տնօրեն Արթուր Վանեցյանը պաշտոնապես առաջադրել է իր թեկնածությունը եւ նշել, որ իր նպատակներից է զարգացնել մասսայական ֆուտբոլը: Ավելի վաղ՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանը, ով այդ պաշտոնում է 2002 թվականից, հայտարարել էր, որ եթե Վանեցյանն առաջադրվի, ինքը չի առաջադրվի: Արթուր Վանեցյանն ընտրվեց միաձայն՝ դառնալով անկախ Հայաստանի պատմության ընթացքում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հինգերորդ նախագահը Նիկոլայ Ղազարյանից, Արմեն Սարգսյանից, Սուրեն Աբրահամյանից եւ Ռուբեն Հայրապետյանից հետո: Իսկ կապանցիները հույս են փայփայում, որ այս փոփոխությունից հետո վերջապես ֆուտբոլը կվերադառնա Կապան, «Գանձասար- Կապանը» տնային հանդիպումները կանցկացնի սեփական մարզադաշտում, մանավանդ որ նման խոստում տվել է նաեւ հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը հուլիսի 5-ին Կապանում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# «Գույների աշխարհ» խորագրով ցուցահանդես Կապանում

Անկախության օրվա առթիվ մարզկենտրոնում կազմակերպված մարզամշակութային միջոցառումներից առանձնացավ Կապանի մշակույթի կենտրոնում կազմակերպված ցուցահանդեսը, որ «Գույների աշխարհ» խորագիրն էր կրում: Ցուցադրանքում երիտասարդ գեղանկարիչ Դավիթ Դանիելյանի երկու տասնյակից ավելի գեղանկարներն են՝ «Հեղափոխություն», «Մտորումներ», «Զարթոնք», «Ժայթքում», «Իմպրովիզացիա», «Հաղթանակ», «Հանդիպում», «Քարանձավ» եւ այլն: Դրանք արված են աբստրակտ ոճով: Դատելով այցելուների թվից՝ ցուցահանդեսը հետաքրքրել էր մարզկենտրոնի արվեստասերներին: Ինչպես տեղեկացանք գեղանկարչի մասին պատմող բուկլետից՝ Դավիթը ցուցահանդեսների պակաս չունի. նրա գեղանկարները ցուցադրվել են Երեւանում եւ տարբեր երկներում: Սակայն իր ասելով՝ ամենամեծ ցանկություններից մեկը հայրենի քաղաքում անհատական ցուցահանդես ունենալն էր, այն էլ՝ այդպիսի նվիրական օրը՝ սեպտեմբերի 21-ին, երբ հայ ժողովուրդը տոնում է հայոց անկախ պետականության 27-րդ տարեդարձը:

«Ինչպես երեւում է, դավանում ես աբստրակտ ուղղությունը»,- հարց ուղղեցի արվեստագետին:



**«Կարելի է ասել էմոցիոնալ, կարելի է ասել երեւակայական, էական չէ՝ ինչպես են անվանում, կարեւորն այն է, որ ես անկեղծորեն իմ հույզերը հաղորդում եմ կտավին, ինձ ներկայացնում եմ այդ կտավներում, դրանցում տեսնում եմ իմ կյանքի փոքրիկ հատվածը: Ես արվեստով եմ ապրում, գեղանկարչությամբ, ուստի մշտապես աշխատում եմ ու մասնակցում ցուցահանդեսների: Ուսման տարիներին դիմանկարներ եմ արել, երբ Կապանում եմ լինում, գեղանկարներ եմ անում, բայց ընտրեցի այս ճանապարհը, որ ինձ ավելի հոգեհարազատ է, ավելի հաճելի ու սրտամոտ, միայն այս ազատ, երեւակայական գեղանկարչությամբ եմ կարողանում անկեղծանալ»,**- եղավ պատասխանը:

Նկատեցի, որ նրա կտավներում առավել նկատելի է կարմիրը: Փորձեց կատակել. **«Արմատներով Շիկահող գյուղից եմ, եւ Կապանում ասում են ծննդով շիկահողցիները կարմիր գույնը սիրում են, երեւի դրանից է»:**

**«Որպես նոր սերնդի ներկայացուցիչ՝ Դավիթը հրաշալի նկարիչ է, այդ ձեւի մեջ իրեն լավագույնս է դրսեւորել: Եւ գունային զգացողությունը, եւ հարմոնիան նրա կտավներում պատշաճ մակարդակի վրա են: Դա է նրա հաղթաթուղթը: Աբստրակտ ոճի մեջ դեռեւս անելիք ունի, այս ամենով չի սահմանափակվում նրա ստեղծագործական աշխարհը»,**- այսպես գեղանկարիչ Լորիկ Մինասյանն իր տպավորությունները ներկայացրեց:

Իսկ գեղանկարիչ Հրանտ Էլչյանը նշեց. **«Նայելով Դավիթի գեղանկարները՝ մի մտքի ես հանգում. դրանց մեջ ռիթմ կա, գունային հարաբերությունները**

էջ 8

# «Արարատցեմենտի» կապանյան արտադրամասի կառուցման առնչությամբ քրգործ է հարուցվել

էջ 6

դուրս է, եւ ինչ փաստացի լծակներ ունի համայնքի ղեկավարությունը՝ շինարարությունը կասեցնելու համար:

Հայրապետյանն էլ նշել էր՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ համայնքի վարչական սահմաններում շենքեր եւ շինություններ ինքնակամ կառուցելու համար տեղական ինքնակառավարման մարմինները որպես վարչական պատասխանատվության միջոց իրավասու են կիրառելու տուգանքի նշանակում՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց նկատմամբ 200 հազար դրամի չափով, իսկ նման իրավունք չունեցող անձանց նկատմամբ՝ 400 հազար դրամի չափով: Այսինքն՝ քանի որ «Արարատցեմենտ» ՓԲԸ-ն երկուսը պիտի անցկացվեին):

Դրանից հետո «Արարատցեմենտի» համար հերթական վատ լուրը ստացվեց. ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը ընկերության նկատմամբ վարչական վարույթ հարուցեց «Հետքի» հրապարակումների հիման վրա: Տեսչական մարմնի մամուլի քարտուղար Վրույր Պեպանյանն մեզ հետ հեռախոսազրույցում ասել է, որ վարույթը դեռեւս ընթացքի մեջ է, եւ որեւէ այլ տեղեկություն այս փուլում հայտնել չեն կարող:

Դրանից հետո կապանցիները եւս մեկ անգամ տապալեցին երրորդ հանրային լսման կայացումը: Հանրային քննարկման կրկնակի ձախողումից հետո «Մուլտի Գրուպ» կոնցեռնի («Արարատցեմենտը» այս կոնցեռնի մաս է)



տուգանվել էր 600 հազար դրամով, կարելի էր եզրակացնել, որ այն ինքնակամ շինարարություն էր սկսել նաեւ իրեն սեփականության կամ օգտագործման (կառուցապատման) իրավունքով չպատկանող հողամասում: Նախկին համայնքապետը նաեւ հայտնել էր, որ ընկերությունն ամբողջությամբ վճարել է տուգանքը:

Մեր հարցումից հետո համայնքապետարանը կրկին վարչական վարույթ էր հարուցել «Արարատցեմենտի» նկատմամբ: Համայնքի ղեկավարը նշել էր, որ եթե հավաստի տվյալներ արձանագրվեն շինարարության իրականացման վերաբերյալ, ապա կքննարկվի «Արարատցեմենտի» նկատմամբ կրկնակի վարչական պատասխանատվության հարցը: Շաբաթներ անց Հայրապետյանը տեղեկացրել էր, որ 600 հազար դրամով տուգանվելուց հետո ՓԲԸ-ն շինաշխատանքներ չի կատարել, կառույցները գտնվում են նույն վիճակում: Նախկին ղեկավարը նշել էր, թե համայնքապետարանը հետեւում է տարածքում ընթացող գործողություններին. ըստ այդմ՝ «Արարատցեմենտ» ընկերությունը միայն իր ձեռքբերած մեքենասարքավորումները, ագրեգատները եւ կոնստրուկցիաներն է տեղափոխել իր սեփականություն հանդիսացող տարածք եւ կատարել բեռնաթափման, պահեստավորման կամ տեղակայման բնույթ կրող աշխատանքներ, որոնց համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

Այդուհանդերձ, կապանցի բնապահպանների ու ակտիվիստների դժգոհություն էր առաջացրել այն հանգամանքը, որ ցեմենտի աղացման արտադրամասը, չնայած համայնքապետարանի հավաստիացումներին, գրեթե կառուցման ավարտին է հասցվել: Այս հանգամանքներում նրանք տապալեցին շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ երրորդ հանրային լսումը (երկուսն արդեն տեղի էին ունեցել, եւս փոխտնօրեն Արայիկ Կեսոյանը դժգոհությամբ հայտարարել էր, որ համայնքապետարանը (հուլիսի 16-ից համայնքապետի ժամանակավո պաշտոնակատարը Նարեկ Ղահրամանյանն է) չի ապահովել հանրային լսումը՝ դրանով իսկ խախտելով օրենքը: Սեպտեմբերի 4-ին կապանցիներն արդեն երրորդ անգամ են տապալել երրորդ լսման կայացումը: Այս անգամ Արայիկ Կեսոյանը համայնքապետարանից խնդրել է տրամադրել արձանագրություն՝ նշելով հանրային լսման կայացմանը դեմ արտահայտվող քաղաքացիների անունները՝ նրանց ստորագրություններով: Ակտիվիստները սա համարել են անօրինական գործողություն:

Կապանի համայնքապետի պաշտոնակատար Նարեկ Ղահրամանյանի մամուլի քարտուղար Մարգարիտա Մանուկյանը «Հետքի» հետ հեռախոսազրույցում ասաց, թե «Արարատցեմենտը» մեղադրում է համայնքապետարանին կողմնակալ լինելու մեջ, մինչդեռ, ըստ Մանուկյանի, երրորդ լսման թե՛ երկրորդ, թե՛ երրորդ փորձերին համայնքապետարանն իր գործառույթները կատարել է՝ դահլիճը տրամադրվել է, բոլոր պայմանները ստեղծել են, սակայն բողոքի ակցիայի մասնակիցները փակել են դահլիճի մուտքը՝ այդպիսով թույլ չտալով ոչ միայն «Արարատցեմենտի», այլեւ համայնքապետարանի աշխատակիցներին ներս մտնել:

**«Այս դեպքում բռնի ուժ կիրառելը բացառվում էր, անգամ ոստիկանության ներկայացուցիչները փորձում էին հաշտարար ինչ-որ միջոցներ գտնել, բայց միեւնույնն է՝ ցուցարարները հաստատակամ էին իրենց դիրքորոշման մեջ»,-** նշեց Մ. Մանուկյանը: Դեռեւս հայտնի չէ երրորդ լսման հերթական փորձի անցկացման օրը:

**hetq.am**
**2018-09-11**

# Կապանի թատրոնը՝ միջազգային փառատոնում



Երկրորդ անգամ Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնը մասնակցեց Բելառուսի Բրեստ քաղաքում սեպտեմբերի 11-ից 16-ն անցկացված թատերական միջազգային փառատոնին:

Գնալով ընդլայնվում է 1996 թվականից անցկացվող «Սպիտակ աշտարակ» կոչվող այդ փառատոնի աշխարհագրությունը, ներկայացումների ժանրային ներկապնակը դառնում ավելի վառ ու բազմազան: Այս անգամ բացի կազմակերպիչ երկրից՝ Բելառուսից, մասնակցում էին ինը երկրի թատերական կոլեկտիվներ:

Փառատոնի վեց օրերին բեմադրվեց 26 ներկայացում:

Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնը բելառուս (եւ ոչ միայն) հանդիսականի դատին հանձնեց Անտոն Չեխովի «Կարապի երգը» մոնոներկայացումը (բեմադրությունը՝ Գրիշա Մարգարյանի, դերասան՝ Արամ Հայրապետյան):

«Կարապի երգը» ռուս մեծ դասական Անտոն Չեխովի լավագույն ստեղծագործություններից է: Դա մի պատմություն է դերասանի մասին, ով մեն-մենակ մնալով իր հերոսների հետ, հանդիսականին պատմում եւ ներկայացնում է իր ապրումները, հույզերը, երազանքները եւ ձգտումները:

Բեմադրիչ Գրիշա Մարգարյանը, ով ներկայացման բեմագիրն է ստեղծել, նաեւ երաժշտական եւ նկարչական ձեւավորումներն արել, չեխովյան մի քանի գործող անձանց փոխարինել է հայ դասական դրամատուրգիայի հերոսներով, նրանց մենախոսություններով: Ռուս դասականի պիեսի շրջանակում ներկայացվեց նաեւ հայկականը: Բեմադրությունը հավանությամբ ընդունեց բազմազգ հանդիսականը, մանավանդ որ ռուսերեն համաժամանակյա թարգմանությամբ էր ընթանում:

Մինչ ներկայացումը ցուցադրվեց տեսաֆիլմ Մեծ հայրենականի առաջին օրերից հերոս ամրոց Բրեստի պաշպանությանը մասնակցած կապանցի զինվորների մասին, որոնց մի մասը զոհվեց հենց ամրոցի պաշտպանության ժամանակ:

Կապանից մեկնած պատվիրակությունը այցելեց հուշահամալիր եւ ծաղկեպսակ դրեց հերոսների անունը հավերժացնող հուշակոթողի մոտ: Կապանյան խմբի հետ ժամանած ջութակահարուհին հնչեցրեց կոմիտասյան մեղեդիներ:

Փառատոնի ավարտին եղան պարգեւատրումներ: Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետթատրոնի տնօրեն Կամո Արզումանյանն արժանացավ փառատոնի դիպլոմին՝ հայ թատերարվեստի զարգացման եւ պրոպագանդման գործում ունեցած ավանդի համար: Դիպլոմի արժանացավ նաեւ դերասան Արամ Հայրապետյանը, որ նրան հանձնեց Բրեստի դրամանյի ակադեմիական թատրոնի ղեկավար եւ փառատոնի տնօրեն Ալեքսանդր Կոզակը:

**«Միջազգային այդ փառատոնը լավագույն հարթակ է փորձի փոխանակման առումով, նաեւ հնարավորություն է ստեղծում իմանալ այլ երկրների թատրոնների ստեղծագործական ուղղվածության մասին, հանդիպել թատերական գործիչների հետ: Մեր ներկայացմանը մասնակցում էին տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ, ովքեր ասացին, որ կարոտ են մայր հայրենիքից ժամանած խմբերի ելույթներին: Դեռ ավելին, մեր պատվիրակությունը հյուրընկալվեց մի հայկական ընտանիքում, շատ ջերմ ընդունելություն էր»**,- «Սյունյաց երկրին» փոխանցեց թատրոնի տնօրեն Կամո Արզումանյանը:

Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնը «Սպիտակ աշտարակ» փառատոնին առաջին անգամ մասնակցել էր 2016-ին՝ Հրանտ Մաթեւոսյանի «Աշնան արեւ» վիպակի մոտիվներով ստեղծված բեմադրությամբ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# «Գույների աշխարհ» խորագրով ցուցահանդես Կապանում

էջ 7

**բավականին ինտելեկտուալ են: Նրա կտավները նման են ժամանակակից ջազ-բլյուզի. երաժշտությունը կա, բայց բառերը՝ ոչ»**:

Ցուցահանդեսի այցելուներից Օլգա Վոլկովան Սանկտ-Պետերբուրգից է, իր բնորոշմամբ՝ մշակութային մայրաքաղաքից, բայց հիացած էր Դավիթ Դանիելյանի գեղանկարչությամբ. **«Շատ հետաքրքիր է , որ նա աշխարհը պատկերում է այսպիսի երեւակայական շնչով, ինչ-որ տեղ նկարները նման են իրար, բայց տարբեր են մեկնաբանությունները: Ծանոթ եմ նրա հոր՝ Հրանտ Դանիելյանի ստեղծագործություններին, որոնցում պատկերված են հայրենի եզերքի պատմությունը, բնությունը, ծաղիկներ, բայց Դավիթն ընտրել է աբստրակտ ոճը: Գովելի է, որ այսպիսի փոքր քաղաքում նման ցուցահանդես է կազմակերպվում: Արվեստասերիս համար հաճելի է, որ նման տաղանդավոր գեղանկարիչներ կան»:**

Գեղանկարները դիտելուց հետո Դավիթին հարցրի, թե կա՞ մի նկար, որից ինքը դժվարությամբ կբաժանվի: Պատասխանեց, թե այդպիսին չկա, պարզապես հուսով է, որ իր լավագույն նկարները դեռ առջեւում են:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«**ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ**»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
**(091) 45 90 47,**
**(077) 45 90 47**:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 03.10.2018թ.: